



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 116

ՄԱՀՈՒԸՆԷ ՓՐԿՈՒԱԾ

Սիրեցի Տէրը, որովհետեւ լսեց աղօթքս եւ աղաչանքս.
ականջ տուաւ ինձի՝ ամէն անգամ որ օգնութեան կանչեցի:
Երբոր մահուան որոգայթները զիս պաշարեցին,
մահուան աշխարհին տագնապով բռնուեցայ,
երբ նեղութիւն եւ անձկութիւն ունեցայ՝
Տէրը օգնութեան կանչեցի, ըսելով.
«Կ'աղաչեմ, Տէր, ազատէ զիս»:
Բարեգութ է Տէրը եւ արդար.
մեր Աստուածը կ'ողորմի:
Տէրը կը պահէ անօգնական մարդիկը,
ինչպէս փրկեց զիս՝ տկարութեանս մէջ:
Հանգստութիւնդ վերագտիր, ճ՛վ իմ անձս,
որովհետեւ Տէրը բարիք ըրաւ քեզի:
Տէրը զիս մահուրնէ փրկեց, աչքէս արցունքը սրբեց,
եւ ոտքերս սայթափումէ հեռու պահեց:
Ուստի Տիրոջ ներկայութեան պիտի ապրիմ՝
ողջերու երկրին մէջ:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեղոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի քանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ԻՍԱՀԱԿԻ ԿՄՂՐԻ ԳԵՐԱՐԱՅԻ ՄԷՋ (26:1-25)

«Երկրին մէջ սով եղաւ»:

«Տէրը ըսաւ Իսահակին. “Եգիպտոս մի իջներ, բնակէ այն երկրին մէջ որ քեզի պիտի ըսեն: Ես քեզի հետ պիտի ըլլամ”»: Աստուած կը վստահեցնէ Իսահակին, որ առանձին պիտի չձգէ զինքը:

«Աբրահամ իմ ձայնիս ականջ դրաւ եւ իմ հրամաններս ու պատուիրանքներս, իմ կանոններս ու օրէնքներս պահեց»: Ոչ միայն ականջ փակ, այլ նաեւ պահել: Այլ խօսքով՝ Աստուած կը թելադրէ Իսահակին որ նմանի Աբրահամին, ոչ միայն լսող ըլլայ, այլ՝ պահող, կը նշանակէ գործադրող: Եւ ահա Աստուած իր փրկած խոստումը կը կատարէ երդումով:

Ինչպէս Աբրահամի պարագային, Իսահակ ինք ալ իր կնոջ համար այնպէս մը կը ներկայացնէ որպէս իր քոյրը: Խորքին մէջ, սակայն, Ռեբեկա եւ կինն էր եւ ազգականական կապով՝ քոյրը: Հեղափոխականօրէն, ըստ հապուածին, Իսահակ չ'ըսէր կինս չէ, այլ՝ քոյրս է:

Իսահակ ապրեցաւ այդ երկրին մէջ, եւ ահա ցանց ու հարիրապարկ սկսաւ արդիւնք քաղել, բայց Իսահակի այս յաջողութիւնը շատ ալ ընդունելի չեղաւ փեղոյն բնակիչներուն՝ Փղշպացիներուն, որոնք սկսան նախանձի: Սա կը նշանակէ որ բարիին յաջողութիւնը նախանձ կրնայ պատճառել չարին: Եւ ահա իբրեւ արդիւնք սկսան Աբրահամի ծառաներուն փորած ջրհորները հողով լեցնել:

Տակաւին, բարիին ներկայութիւնն ալ հանդուրժելի չէ. «Գնա մեր քովէն»:

Հակառակ այս իրողութեան, Իսահակ, սակայն, երբեք ալ չհրաժարեցաւ հոր փորելէ: Նախ սկսաւ իր հօր Աբրահամի օրերէն փորուած ջրհորները, որոնք հողով լեցուած էին փղշպացիներուն կողմէ, բանալ: Իսկ անոնց կողքին նորեր:

Ջրհորին կարելութիւնը: Ընդհանրապէս գիտենք թէ ջուրը որքան կարելոր է մարդուն համար: Կենդանութիւն, մաքրութիւն, լուսցում, հագեցում: Այս բոլորը ի մտի ունենալով Իսահակ ոչ միայն ինչ ջրհորները կը բանար, այլ նաեւ նորերը: Տակաւին, Իսահակի մտքին մէջ կար ոչ միայն նիւթական ջրհորը, այլ մանաւանդ՝ հոգեւորը՝ Աստուծոյ Խօսքը, որ Կենդանի Ջուր է. եւ կը հագեցնէ, եւ կը մաքրէ:

Այնպէս ինչպէս Իսահակ եւ իր ծառաները եկան եւ այդ ջրհորները բացին, նոյնպէս ալ խորհրդաշնականօրէն Քրիստոս եւ իր ծառաները՝ Աստուծոյ Խօսքին ջրհորը բացին, որպէսզի կարելի ըլլայ անկէ ջուր խմելու: Այնպէս ինչպէս կը կարդանք Էմմաուսի ճամբորդներուն դէպքը. «Սուրբ գիրքերը կը բացարթէր» (Ղուկաս 24:32):

Միւս կողմէ, այս ջրհորի պարկերացումին մէջ կարելի է տեսնել փակաւին մեր հոգիները, որոնք չարին կամ մեր ցանկութեան պատճառով հողով լեցուած են: Որ սակայն անոնք, մեր հոգիները, ծարաւի են, կ'ուզեն Աստուծոյ ջուրէն խմել:

ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ ԻՍԱՀԱԿԻ ԵՒ ԱԲԻՍԵԼԷՔԻ ՄԻՋԵՒԻ (26:26-33)

Հեղափոխականօրէն այս բաժինը մեզի կը ներկայացնէ Աբիմելեքի եւ Իսահակի միջեւ համաձայնութիւն մը: Աբիմելեք եւ իր բարեկամը եւ իր սպարապետը Իսահակին կ'երթան: Այս երեքին ներկայութիւնը այնպէս մը կը բացապրուի որպէս Բանականութիւն, բնութիւնը, եւ բարոյականութիւնը, որոնք ոչ ամբողջութեամբ կը հակասեն ճշմարտութիւնը, եւ ոչ ալ ներդաշնակ ու համաձայն են ճշմարտութեան:

ԵՍԱԿԻՆ ՕՏԱՐ ԿԻՆԵՐԸ (26:34-35)

Շատ կարճ հապուածի մը մէջ կը ներկայացուի Եսաւին ընթացքը: Փոխանակ հետեւելու իր հօրը հետքերուն, իր հօրը փունէն աղջիկ առնելու կնութեան, ընդհակառակը՝ օտար աղջիկներ կ'առնէ, ինչ որ Իսահակին ու Ռեբեկային համար սրտի ցաւ կը պատճառէ: Հիմը կը տեսնենք թէ ինչո՞ւ Յակոբ ուզեց Անդրանկութիւնը ձեռք ձգել, փրկելու համար այն վրանգէն ինչ որ ահաւասիկ մենք կը տեսնենք Եսաւի յառաջիկայ կեանքի ընթացքին: Որովհետեւ Անդրանկութեան փեր ըլլալ կը նշանակէ փունին փեր ըլլալ, փունին փեր ըլլալ կը նշանակէ պահել այն ուղին, դաստիարակութիւնը ինչ որ փրկուած էր փան մէջ: